

Կ-764-19.10.2020-SՀ-011

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

ՈԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը կարգավորում է ռազմական դրության ժամանակահատվածում հարկ վճարողների կողմից Եվրասիական տնտեսական միության անդամ հանդիսացող պետություններից ապրանքների ներմուծման մասով հարկային արտոնությունների սահմանման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև ռազմական դրության ժամանակահատվածում անհատույց (նվիրատվությամբ) մատակարարված ապրանքների՝ ակցիզային դրոշմանիշերով կամ դրոշմապիտակներով դրոշմավորման հետ կապված հարաբերությունները:

Հոդված 2. Ռազմական դրության ժամանակահատվածում հարկ վճարողների կողմից Եվրասիական տնտեսական միության անդամ հանդիսացող պետություններից ապրանքների ներմուծումն ավելացված արժեքի հարկից, ակցիզային հարկից և (կամ) բնապահպանական հարկից ազատելը

1. Ռազմական դրության ժամանակահատվածում հարկ վճարողների կողմից Եվրասիական տնտեսական միության անդամ հանդիսացող պետություններից Եվրասիական տնտեսական միության ապրանքի կարգավիճակ ունեցող՝ Կառավարության հաստատած ցանկում ներառված ապրանքների ներմուծումն ազատվում է ավելացված արժեքի հարկից, ակցիզային հարկից և (կամ) բնապահպանական հարկից՝ այդ ապրանքները ռազմական դրության ժամանակահատվածում Պաշտպանության նախարարությանը, Արտակարգ իրավիճակների նախարարությանը, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը և (կամ) Առողջապահության նախարարությանը անհատույց (նվիրատվությամբ) մատակարարելու դեպքում:

2. Կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի կամ նոտարների կողմից ներմուծված ապրանքները Պաշտպանության նախարարությանը, Արտակարգ իրավիճակների նախարարությանը, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը և (կամ) Առողջապահության նախարարությանը անհատույց (նվիրատվությամբ) մատակարարելու փաստը հաստատվում է կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների կողմից Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք) սահմանված կարգով դուրս գրված և Պաշտպանության նախարարության, Արտակարգ իրավիճակների նախարարության, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և (կամ) Առողջապահության նախարարության կողմից վավերացված հաշվարկային փաստաթղթերով: Անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից ներմուծված ապրանքները Պաշտպանության նախարարությանը, Արտակարգ իրավիճակների նախարարությանը, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը և (կամ) Առողջապահության նախարարությանը անհատույց

(նվիրատվությամբ) մատակարարելու փաստը հաստատվում է կողմերի միջև օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված այլ փաստաթղթերով:

3. Կառավարության հաստատած ցանկում ներառված և ռազմական դրության ժամանակահատվածում Պաշտպանության նախարարությանը, Արտակարգ իրավիճակների նախարարությանը, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը և (կամ) Առողջապահության նախարարությանը անհատույց (նվիրատվությամբ) մատակարարված ապրանքների մասով Օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 73-րդ հոդվածի դրույթները կիրառելի չեն:

Հոդված 3. Ռազմական դրության ժամանակահատվածում անհատույց (նվիրատվությամբ) մատակարարված ապրանքների մասով ակցիզային դրոշմանիշերով կամ դրոշմապիտակներով դրոշմավորման պարտավորությունից ազատելը

1. Դրոշմավորման ենթակա չեն ռազմական դրության ժամանակահատվածում Օրենսգրքի 389-րդ և 390-րդ հոդվածների համաձայն՝ ակցիզային դրոշմանիշերով կամ դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա ապրանքները՝ Պաշտպանության նախարարությանը, Արտակարգ իրավիճակների նախարարությանը, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը և (կամ) Առողջապահության նախարարությանը անհատույց (նվիրատվությամբ) մատակարարելու դեպքում: Ռազմական դրության ժամանակահատվածում դրոշմավորված ապրանքներ հանձնելու դեպքում դրա վերաբերյալ համապատասխան նշում է կատարվում սույն օրենքի 2-րդ հոդվածով նախատեսված փաստաթղթերում:

Հոդված 4. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

2. Սույն օրենքի 2-րդ հոդվածի գործողությունը տարածվում է 2020 թվականի սեպտեմբերի 27-ից մինչև սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ Կառավարության համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելն ընկած ժամանակահատվածում Եվրասիական տնտեսական միության անդամ հանդիսացող պետություններից ներմուծված՝ Եվրասիական տնտեսական միության ապրանքի կարգավիճակ ունեցող, ինչպես նաև անհատույց (նվիրատվությամբ) մատակարարված բոլոր ապրանքների նկատմամբ՝ դրանք սույն օրենքով սահմանված կարգով Պաշտպանության նախարարությանը, Արտակարգ իրավիճակների նախարարությանը, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը և (կամ) Առողջապահության նախարարությանը անհատույց (նվիրատվությամբ) մատակարարելու դեպքում:

3. Սույն օրենքի 2-րդ հոդվածով սահմանված՝ Եվրասիական տնտեսական միության ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների ցանկը Կառավարությունը հաստատում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ տասնօրյա ժամկետում:

Հիմնավորում

«Ռազմական դրության ժամանակահատվածում հարկային արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը). Նախագծի նպատակը ռազմական դրության ժամանակահատվածում ԵՏՄ անդամ պետություններից ներմուծվող ապրանքների մասով հարկային արտոնություն սահմանելն է:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները. Հայաստանի Հանրապետությունում հայտարարված ռազմական դրության ժամանակահատվածում հարկ վճարողների կողմից Հայաստանի Հանրապետություն են ներմուծվում մեծ քանակությամբ ապրանքներ, որոնք հետագայում անհատույց (նվիրատվությամբ) հանձնվում են Պաշտպանության նախարարությանը, Արտակարգ իրավիճակների նախարարությանը, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը և (կամ) Առողջապահության նախարարությանը:

Բայց այդ, առկա են նաև դեպքեր, երբ Պաշտպանության նախարարությանը, Արտակարգ իրավիճակների նախարարությանը, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը և (կամ) Առողջապահության նախարարությանը անհատույց (նվիրատվությամբ) հանձնվում են նաև ակցիզային դրոշմանիշերով կամ դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա ապրանքներ:

Խնդիրը կայանում է նրանում, որ գործող հարկային օրենսդրության համաձայն՝ անկախ հետագայում ապրանքները անհատույց (նվիրատվությամբ) պետությանը հանձնելու հանգամանքից, հարկ վճարողների կողմից ապրանքների ներմուծումը հարկվում է ԱԱՀ-ով, իսկ որոշ ապրանքների դեպքում՝ նաև ակցիզային հարկով և (կամ) բնապահպանական հարկով, ինչը լրացուցիչ բեռ է ներմուծող անձանց համար:

Մյուս կողմից, ռազմական դրության ժամանակահատվածում պետությանն անհատույց (նվիրատվությամբ) ապրանքներ մատակարարող հարկ վճարողների համար լրացուցիչ բեռ է նաև ապրանքների դրոշմավորման պարտավորությունը:

3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները. Նախագծով առաջարկվում է սահմանել, որ՝

1) ռազմական դրության ժամանակահատվածում հարկ վճարողների կողմից Եվրասիական տնտեսական միության անդամ հանդիսացող պետություններից Եվրասիական տնտեսական միության ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների ներմուծումն ազատվում է ավելացված արժեքի հարկից, ակցիզային հարկից և (կամ) բնապահպանական հարկից, եթե այդ ապրանքներն անհատույց (նվիրատվությամբ) մատակարարվում են Պաշտպանության նախա-

րարությանը, Արտակարգ իրավիճակների նախարարությանը, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը և (կամ) Առողջապահության նախարարությանը,

2) ՀՀ հարկային օրենսգրքի համաձայն դրոշմավորման պարտավորություն կրող անձինք ազատվում են այդ պարտավորությունից դրոշմավորման ենթակա ապրանքները Պաշտպանության նախարարությանը, Արտակարգ իրավիճակների նախարարությանը, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը և (կամ) Առողջապահության նախարարությանը անհատույց (նվիրատվությամբ) մատակարարելու դեպքում:

4. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունն ուղղված է ռազմական դրության ժամանակահատվածում պետությանն անհատույց (նվիրատվությամբ) ապրանքներ մատակարարող անձանց համար առկա խոչընդոտների վերացմանը:

5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք. Նախագիծը մշակվել է ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից:

6. Ակնկալվող արդյունքը. Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է պետությանն անհատույց (նվիրատվությամբ) ապրանքներ մատակարարող անձանց ազատել հարկային և դրոշմավորման պարտավորություններից:

Տեղեկանք

«Ռազմական դրության ժամանակահատվածում հարկային արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ

«Ռազմական դրության ժամանակահատվածում հարկային արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ անհրաժեշտություն կառաջանա ընդունել Եվրասիական տնտեսական միության ապրանքի կարգավիճակ ունեցող՝ ապրանքների ցանկը հաստատող Կառավարության որոշում:

Եզրակացություն

«Ռազմական դրության ժամանակահատվածում հարկային արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ պետական բյուջեի եկամուտների նվազեցման կամ ծախսերի ավելացման մասին

«Ռազմական դրության ժամանակահատվածում հարկային արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ պետական բյուջեի եկամուտների նվազեցում կամ ծախսերի ավելացում չի ակնկալվում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՈԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը կարգավորում է ռազմական դրության ժամանակահատվածում հարկ վճարողների կողմից Եվրասիական տնտեսական միության անդամ հանդիսացող պետություններից ապրանքների ներմուծման մասով հարկային արտոնությունների սահմանման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև ռազմական դրության ժամանակահատվածում անհատույց (նվիրատվությամբ) մատակարարված ապրանքների՝ ակցիզային դրոշմանիշերով կամ դրոշմապիտակներով դրոշմավորման հետ կապված հարաբերությունները:

Հոդված 2. Ռազմական դրության ժամանակահատվածում հարկ վճարողների կողմից Եվրասիական տնտեսական միության անդամ հանդիսացող պետություններից ապրանքների ներմուծումն ավելացված արժեքի հարկից, ակցիզային հարկից և (կամ) բնապահպանական հարկից ազատելը

1. Ռազմական դրության ժամանակահատվածում հարկ վճարողների կողմից Եվրասիական տնտեսական միության անդամ հանդիսացող պետություններից Եվրասիական տնտեսական միության ապրանքի կարգավիճակ ունեցող՝ Կառավարության հաստատած ցանկում ներառված ապրանքների ներմուծումն ազատվում է ավելացված արժեքի հարկից, ակցիզային հարկից և (կամ) բնապահպանական հարկից՝ այդ ապրանքները ռազմական դրության ժամանակահատվածում Պաշտպանության նախարարությանը, Արտակարգ իրավիճակների նախարարությանը, [Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը](#), [Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը](#) և (կամ) Առողջապահության նախարարությանը անհատույց (նվիրատվությամբ) մատակարարելու դեպքում:

2. Կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի կամ նոտարների կողմից ներմուծված ապրանքները Պաշտպանության նախարարությանը, Արտակարգ իրավիճակների նախարարությանը, [Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը](#), [Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը](#) և (կամ) Առողջապահության

նախարարությանը անհատույց (նվիրատվությամբ) մատակարարելու փաստը հաստատվում է կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների կողմից Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով ([այսուհետ՝ Օրենսգրք](#)) սահմանված կարգով դուրս գրված և Պաշտպանության նախարարության, Արտակարգ իրավիճակների նախարարության, [Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության](#) և (կամ) Առողջապահության նախարարության կողմից վավերացված հաշվարկային փաստաթղթերով: Անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից ներմուծված ապրանքները Պաշտպանության նախարարությանը, Արտակարգ իրավիճակների նախարարությանը, [Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը](#) և (կամ) Առողջապահության նախարարությանը անհատույց (նվիրատվությամբ) մատակարարելու փաստը հաստատվում է կողմերի միջև օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված այլ փաստաթղթերով:

[2.3. Կառավարության հաստատած ցանկում ներառված և ռազմական դրության ժամանակահատվածում Պաշտպանության նախարարությանը, Արտակարգ իրավիճակների նախարարությանը, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը և \(կամ\) Առողջապահության նախարարությանը անհատույց \(նվիրատվությամբ\) մատակարարված ապրանքների մասով Օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 73-րդ հոդվածի դրույթները կիրառելի չեն:](#)

Հոդված 3. Ռազմական դրության ժամանակահատվածում անհատույց (նվիրատվությամբ) մատակարարված ապրանքների մասով ակցիզային դրոշմանիշերով կամ դրոշմապիտակներով դրոշմավորման պարտավորությունից ազատելը

1. Դրոշմավորման ենթակա չեն ռազմական դրության ժամանակահատվածում ~~Հայաստանի Հանրապետության հարկային օ~~[Օրենսգրքի 389-րդ և 390-րդ հոդվածների համաձայն՝ ակցիզային դրոշմանիշերով կամ դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա ապրանքները՝ Պաշտպանության նախարարությանը, Արտակարգ իրավիճակների նախարարությանը, \[Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը\]\(#\) և \(կամ\) Առողջապահության նախարարությանը անհատույց \(նվիրատվությամբ\) մատակարարելու դեպքում: Ռազմական դրության ժամանակահատվածում ~~ներմուծված~~ դրոշմավորված ապրանքներ հանձնելու դեպքում դրավերաբերյալ համապատասխան նշում է կատարվում սույն օրենքի 2-րդ հոդվածով նախատեսված փաստաթղթերում:](#)

Հոդված 4. [Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ](#)

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

4.—Սույն օրենքի 2-րդ հոդվածի գործողությունը տարածվում է 2020 թվականի սեպտեմբերի 27-ից մինչև սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ Կառավարության համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելն ընկած ժամանակահատվածում Եվրասիական տնտեսական միության անդամ հանդիսացող պետություններից ներմուծված՝ Եվրասիական տնտեսական միության ապրանքի կարգավիճակ ունեցող, [ինչպես նաև անհատույց \(նվիրատվությամբ\) մատակարարված](#) բոլոր ապրանքների նկատմամբ՝ դրանք սույն օրենքով սահմանված կարգով Պաշտպանության նախարարությանը, Արտակարգ իրավիճակների նախարարությանը, [Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը](#), [Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը](#) և (կամ) Առողջապահության նախարարությանը անհատույց (նվիրատվությամբ) մատակարարելու դեպքում:

2.

3. Սույն օրենքի 2-րդ հոդվածով սահմանված՝ Եվրասիական տնտեսական միության ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների ցանկը Կառավարությունը հաստատում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ տասնօրյա ժամկետում:

Հիմնավորում

«Ռազմական դրության ժամանակահատվածում հարկային արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

7. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը). Նախագծի նպատակը ռազմական դրության ժամանակահատվածում ԵՏՄ անդամ պետություններից ներմուծվող ապրանքների մասով հարկային արտոնություն սահմանելն է:

8. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները. Հայաստանի Հանրապետությունում հայտարարված ռազմական դրության ժամանակահատվածում հարկ վճարողների կողմից Հայաստանի Հանրապետություն են ներմուծվում մեծ քանակությամբ ապրանքներ, որոնք հետագայում անհատույց (նվիրատվությամբ) հանձնվում են Պաշտպանության նախարարությանը, Արտակարգ իրավիճակների նախարարությանը, [Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը](#) և (կամ) Առողջապահության նախարարությանը:

Բայց այդ, առկա են նաև դեպքեր, երբ Պաշտպանության նախարարությանը, Արտակարգ իրավիճակների նախարարությանը, [Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը](#) և (կամ) Առողջապահության նախարարությանը անհատույց (նվիրատվությամբ) հանձնվում են նաև ակցիզային դրոշմանիշերով կամ դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա ապրանքներ:

Խնդիրը կայանում է նրանում, որ գործող հարկային օրենսդրության համաձայն՝ անկախ հետազայում ապրանքները անհատույց (նվիրատվությամբ) պետությանը հանձնելու հանգամանքից, հարկ վճարողների կողմից ապրանքների ներմուծումը հարկվում է ԱԱՀ-ով, իսկ որոշ ապրանքների դեպքում՝ նաև ակցիզային հարկով և (կամ) բնապահպանական հարկով, ինչը լրացուցիչ բեռ է ներմուծող անձանց համար:

Մյուս կողմից, ռազմական դրության ժամանակահատվածում պետությանն անհատույց (նվիրատվությամբ) ապրանքներ մատակարարող հարկ վճարողների համար լրացուցիչ բեռ է նաև ապրանքների դրոշմավորման պարտավորությունը:

9. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները. Նախագծով առաջարկվում է սահմանել, որ՝

1) ռազմական դրության ժամանակահատվածում հարկ վճարողների կողմից Եվրասիական տնտեսական միության անդամ հանդիսացող պետություններից Եվրասիական տնտեսական միության ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների ներմուծումն ազատվում է ավելացված արժեքի հարկից, ակցիզային հարկից և (կամ) բնապահպանական հարկից, եթե այդ ապրանքներն անհատույց (նվիրատվությամբ) մատակարարվում են Պաշտպանության նախարարությանը, Արտակարգ իրավիճակների նախարարությանը, [Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը](#) և (կամ) Առողջապահության նախարարությանը,

2) ՀՀ հարկային օրենսգրքի համաձայն դրոշմավորման պարտավորություն կրող անձինք ազատվում են այդ պարտավորությունից դրոշմավորման ենթակա ապրանքները Պաշտպանության նախարարությանը, Արտակարգ իրավիճակների նախարարությանը, [Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը](#) և (կամ) Առողջապահության նախարարությանը անհատույց (նվիրատվությամբ) մատակարարելու դեպքում:

10. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունն ուղղված է ռազմական դրության ժամանակահատվածում պետությանն անհատույց (նվիրատվությամբ) ապրանքներ մատակարարող անձանց համար առկա խոչընդոտների վերացմանը:

11. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք. Նախագիծը մշակվել է ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից:

12. Ակնկալվող արդյունքը. Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է պետությանն անհատույց (նվիրատվությամբ) ապրանքներ մատակարարող անձանց ազատել հարկային և դրոշմավորման պարտավորություններից:

Տեղեկանք

«Ռազմական դրության ժամանակահատվածում հարկային արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ

«Ռազմական դրության ժամանակահատվածում հարկային արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ անհրաժեշտություն կառաջանա ընդունել Եվրասիական տնտեսական միության ապրանքի կարգավիճակ ունեցող՝ ապրանքների ցանկը հաստատող Կառավարության որոշում:

Եզրակացություն

«Ռազմական դրության ժամանակահատվածում հարկային արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ պետական բյուջեի եկամուտների նվազեցման կամ ծախսերի ավելացման մասին

«Ռազմական դրության ժամանակահատվածում հարկային արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ պետական բյուջեի եկամուտների նվազեցում կամ ծախսերի ավելացում չի ակնկալվում:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԺ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՍԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՈԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ
(փաստաթղթային կոդ՝ 4-764-19.10.2020-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Բաբկեն Թունյան	Նախագծում	Առաջարկվում է նախագծով վերացնել որպես ԱԱՀ-ից ազատված գործարք պետական մարմիններին նվիրված ապրանքների հետ կապված ԱԱՀ-ի գումարների հաշվանցումների սահմանափակումը և վերաձևակերպումներ կատարելու պահանջը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:	Ընդունվել է
2.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Բաբկեն Թունյան	Նախագծում	Առաջարկվում է սահմանել, որ նախագծով նախատեսված կարգավորումները կիրառվում են նաև այն դեպքերում, երբ ապրանքները անհատույց մատակարարվում են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների և Բարձր տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունաբերության նախարարությանը:	Ընդունվել է:	Ընդունվել է:

3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	Առաջարկվում է նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ նախադասությունից հանել «ներմուծված» բառը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
3	ՀՀ կառավարություն	Նախագծում	Առաջարկվում է սահմանել, որ նախագծով նախատեսված կարգավորումները կիրառվում են նաև այն դեպքերում, երբ ապրանքները անհատույց մատակարարվում են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:	Ընդունվել է:
5.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին և 4-րդ հոդվածներ	Առաջարկվում է նախագծի 1-ին և 4-րդ հոդվածների համար սահմանել վերնագրեր:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:	Ընդունվել է: